զեաց Թորոս կաթողիկոսն զհոգին իւր առ Աստուած զուարթ երեսօք։ Եւ ի հինգերորդ պահու ցերեկիս Մարտիրոս վարդապետն եկն յԵրուսաղէմայ, և մեր լեալ ի Սուրբ Նիկողոս մօտ ի վաղջանեալն՝ ոչ կարացաք գնալ ընդ առաջ նորա, այլ ի քահանայիցն որ անդն կային՝ յղեցաք առ նա զի եկեսցէ առ մեզ, և նոյն ժամայն եկն։ Եւ Խաչատուր վարդապետն և Թադէոս[1]) եպիսկոպոսն և Ղազար վարդապետն եկեալ ժողովեցան ի Թաղումն երանելոյն. և ի հասարակել աւուրն սկսաք պաշտել զկարգն մինչ ի մուտս արեւուն, տանելով զնա ի մէջ եկեղեցոյն. և զգիշերն անդ թողեալ պահէին զնա հաբեղայք նորին և աշակերտքն։

Եւ ի հասարակել գիշերոյն (30 Ապրէլ) ելեալ գնացաք յեկեղեցին և առաք զսաղմոսն և աւրհնեցաք զժամն, եւ Դ քահանայք յաջմէ եւ յահեկէ զսուրբ Աւետարանն սկսան կարդալ[2]) մինչ ի լրումն ժամին, և Տէր Մարկոս կրօնաւոր նորին արար զպատարագն փրկական. և յետ պատարագին զգեստաւորեալ ամենեքեան քահանայք մոմեղինօք և խնկօք և օծին. և ապա ել Մարտիրոս վարդապետն ծանուցանել զաղէտ սուրբ Հօրն վաղջանելոյ՝ սակաւ ինչ, զի տարաժամեցաւ։ Եւ ապա զայլ կարգսն կատարեալ պատվով. և ապա վարդապետքն բարձին զդին մինչ ի դուռս եկեղեցոյն, և ապա հրամայեալ քահանայիցն զի բարձցեն՝ և բարձին. և մեք[3]) յաջմէ և յահեկէ ասէաք զերգս շարականաց մինչ ի կամարն Սրբոյն Գէորգայ։ Եւ ոչ զոք թողին մօտիլ ի դագաղն յաշխարհականաց, այլ քահանայից միայն, վասն զի ամենեքեան անդ ժողովեալ էին ի պատիւ թաղման երանելոյն։ Եւ իբրեւ մերձ եղաք ի կամարն Սրբոյն Գէորգեայ, ելին յե-

1) թաթէոս. 2) կարդան. 3) մեր.